ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐ

0009 ք.Երևան, Կորյուն 15/1, Հեռ: (00 37410) 511-771

N ԴԴ-1-Ե-9462

«29» դեկտեմբերի 2023թ.

«Վայթ Քոմունիքեյշն» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Արա Յավրումյանին
(հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Վ. Սարգսյան 95)

Հարգելի պարոն Յավրումյան,

Դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Գնորդ) և «Վայթ Քոմունիքեյշն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) 12.07.2023թ. կնքված «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ» N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/19-1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ» վերտառությամբ հավելված 1-ով նախատեսվել է թվով 4 առանձին չափաբաժիններով մատակարարման ենթակա ապրանքներ, որոնցից՝ Վաճառողի կողմից 18.12.2023թ. մատակարարվել է միայն մեկ չափաբաժնով նախատեսված ապրանքը *(թիվ 3 չափաբաժնով նախատեսված 762 հատ վզկապտ թաշկինակները)*, իսկ մյուս չափաբաժիններով նախատեսված ապրանքները չեն մատակարարվել, որի արդյունքում Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.1 և 2.4.2 կետերով սահմանված իր պարտավորությունները և խախտել է նշված ապրանքների մատակարարման համար սահմանված վերջնաժամկետը, այն է՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Պայմանագրի 2.1.7 և 2.1.5 կետերը՝ տեղեկացվում է, որ Պայմանագիրը մասնակի՝ չմատակարարված ապրանքի մասով միակողմանի լուծվում է, և կկիրառվի Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ սույն ծանուցումը ստանալուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում անհրաժեշտ է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 15 157.44 (տասնհինգ հազար հարյուր հիսունյոթ դրամ և քառասունչորս լումա) ՀՀ դրամ, որպես տույժ:

Հարգանքով՝

ՆԱԻՐԻ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատ.՝ Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն,
Հեռ.՝ /+37410/ 511-777